ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ԹՈՒՂԹ ԿԱՆՈՆԱԿԱՆԸ»

1786 թ. դեկտեմբերին Էջմիածնի վանքի կաթողիկոսական կոնդակների ու նամակների սնագրությունների մատյանում գրանցվեց մի կարևոր գրություն, որը 1787 թ. հունվարի 11-ին մաքրագրվեց երկու օրինակ, մեկն ուղարկվեց Կ. Պոլիս, մյուսը պահվեց Էջմիածնում: Մեր ձեռքի տակ է ցարդ անտիպ մնացած այդ գրության թե՛ սնագրությունը[1] և թե՛ մաքրագիր օրինակը[2]: Վերջինս կնքված է Ղուկաս Կաթողիկոսի (1780-1799) կողմից և վավերացված Էջմիածնի վանքի բոլոր միաբանների (18 եպիսկոպոս, 35 վարդապետ, 3 աբեղա) կնիքներով: Մաքրագրող քարտուղարը կնիքների տակ դրել է միաբանների անունները: Այդ գրության բովանդակությունը խտացված է վերնագրի տեսք ստացած ներքոհիշյալ համառոտագրության մեջ. «Թուղթ կանոնական ի հաստատութիւն նախնեացն սահմանաց վասն որպիսաբար ընտրելոյ և կացուցանելոյ զկաթուղիկոս ի սուրբ Աթոռս Էջմիածնի, և որպէս վարելոյ սպասաւորաց նոցա և գործակալաց, նաև նուիրակացն ի գործս իւրեանց, որ առ ընդհանուր ազգն: Գրեցաւ յերկուս օրինակս և կնքեցաւ ի սրբազաւէն և բոլոր քահանայակարգ միաբանիցն ե յայլոց, որոց մինն առաքեցաւ ի Կոստանդինուպօլիս և մինն պահեցաւ ի սուրբ Աթոռոջս»[3]:

Ինչը պատճառ դարձավ «Թուղթ կանոնականի» ստեղծվելուն և ինչ է դա իրենից ներկայացնում:

---

[1] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4501, էջ 1565-1566:

[2] Մատենադարանի արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 243, վավերագիր 69:

[3] Ձեռ. 4501, էջ 1501, 1565:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1763-1780) 1775 թ. Զմյուռնիայից եկ կանչեց Ղուկաս Կարնեցի եպիսկոպոսին, որը մեկնել էր այնտեղ որպես նվիրակ և առաջնորդ: Ի դեմս իր նախկին ռաշակերտի նա տեսնում էր ազդեցիկ, գործնական, շրջահայաց և կազմակերպչական անուրանալի ձիրքով շնորհված մի հոգևորականի, որին կարելի էր այդպիսի ծանր ու դժվարին պայմաններում վստահել Հայոց Եկեղեցու ղեկավարությունը: Եկ բերելով նրան Էջմիածին՝ քաղաքական բուռն իրադարձությունների մեջ ուժասպառ եղած Սիմեոն Երևանցին ծրագրել էր Ղուկաս Կարնեցուն որպես խորհրդական պահել իր կողքին և ի վերջո նրան թողնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռը:

Այդ տարիներին քաղաքական ծանր վիճակ էր ստեղծվել Արևելյան Հայաստանում, հատկապես նրա կենտրոնական մասում՝ Արարատյան դաշտում: Երևանի խանը, չկարողանալով պաշտպանվել Իրանի հյուսիսում մերթ ընդ մերթ հզորացող բռնակալներից, հարկադրված էր եղել համապատասխան դրամական վարձատրությամբ օգնություն հայցել Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ Բ-ից: Հարկային այդ կախվածությունը, սակայն, տևական բնույթ չուներ, ուստի վրաց թագավորը ժամանակ առ ժամանակ արշավում էր դեպի Երևան՝ ավերելով ու ամայացնելով Արարատյան դաշտի բնակավայրերը: Այդ արշավանքները պարբերաբար եղանում էին միմյանց և Սիմեոն Երևանցին միշտ չէ, որ կարողանում էր հաշտեցնել երկու կողմերին:

1779 թ. Հերակլի զորքը կրկին ներխուժել էր Արարատյան դաշտ և շրջապատել Երևանի բերդը: Չկարողանալով գրավել այն՝ նա Արարատյան դաշտի ութ գյուղերի բնակիչներին իր զորքի հետ տարել էր Վրաստան: Բայց նախքան գնալը, Երևանի խանին նա մի նամակ էր գրել, որով հայտնել էր իր կողմից երկիրն ավերելու, մարդկանց գերեվարելու և այն մասին, որ «թէ այսպէս է առնելոց, եթէ ոչ անսայցեն»[4]:

Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի կյանքի վերջին ամիսներն անցան ընդհանուր ավերածության ու ամայության պայմաններում: Հերակլի տեղահան արած և Վրաստան տեղափոխած բնակիչների մի մասը ոչնչացավ՝ «կէսք ժանտ-մահիւ, կէսք օդով խստութեան, կէսք սովու և կէսք այլ իմն ցաւօք ըստ մեծի մասին հանգեան ի Քրիստոս»[5]: Հետագայում Ղուկաս Կաթողիկոսը շատ ճիգ ու ջանք թափեց կենդանի մնացածներին իրենց տները վերադարձնելու համար: Հայտնի է, որ Երևանի Հուսեյն-Ալի խանը ձգտում էր Հերակլի արշավանքի վրեժը լուծել հայերից: Նա ձերբակալել էր Երևանի հայ մեծատուններից ոմանց, թալանել նրանց ունեցվածքը և մի

---

[4] Գարեգին Ա. Կաթողիկոս, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ. Ե., 1951, Անթիլիաս-Լիբանան, էջ 52:

[5] Նույն տեղում, էջ 56:

մասին սպանել: Այժմ նա հարմար առիթի էր սպասում իր բարկությունը Էջմիածնի վրա թափելու համար:

Սիմեոն Երևանցին մահացավ 1780 թ. հուլիսի 26-ին: Մահից երկու օր առաջ նա կանչել էր բոլոր եպիսկոպոսներին և հայտնել, որ ինքը Ղուկասին պահել էր իր մոտ, որ «յաջորդաբար նա լիցի Հայրապետ և կառավարեսցէ զսուրբ Աթոռս յայսմ վտանգածին և վրդովեալ ժամանակիս»[6]: Դրանից յոթ օր անց, օգոստոսի 2-ի կիրակի օրը, Ղուկաս Կարնեցին օծվեց կաթողիկոս[7]: Էջմիածնի միաբանները, հաշվի առնելով ստեղծված պայմանները, ստիպված էին արտակարգ հապճեպությամբ, առանց դրսի հայերի գիտության ու համաձայնության կատարել նոր կաթողիկոսի ընտրությունը՝ մի բան, որ կարող էր հայության մեջ դժգոհություն ու պառակտում առաջ բերել: Այդ շտապողականությունը վանքի գրագիր Անանիա սարկավագը պատճառաբանում է այսպես.

«Վասն աւերութեան երկրիս, ըստ մեծի մասին և խառնակութեանցն (միաբանները-Վ. Գ.) ոչ կարացին թողուլ թարց հոգաբարձուի զսուրբ Աթոռս յերկար ժամանակս: Քանզի այս երկրական ժեստքն և գայլաբարոյքն կատաղիք կամէին զպէսպէս վնասս հասուցանել սրբոյ Աթոռոյս ամենայն կերպիւ, թող թէ արտաքին թշնամիքն երկրիս»[8]:

Սովորաբար, կաթողիկոսի ընտրության հարցում Կ. Պոլսի հայերին էր վերապահված վերջին խոսքը: Երբ լինում էր ընտրությունը և այդ մասին կազմվում համախոսական գրություն (մահսարագիր), այն տանում էին շրջակա վայրերը և հայկական գաղութները, որտեղ ի նշան համաձայնության կնքում էին մահսարագիրը: Ամենավերջում մահսարատար արքեպիսկոպոսը մեկնում էր Կ. Պոլիս, և այնտեղի հայերը տալիս էին իրենց համաձայնությունը կամ հակառակ դեպքում, եթե կար ավելի հարմար թեկնածու, նրան էին ընտրում, հետո ստանում կաթողիկոսի հաստատման սուլթանական հրովարտակը (ֆերմանը) և ուղարկում Էջմիածին: Դրանից հետո միայն տեղի էր ունենում կաթողիկոսի օծումը[9]: Այժմ խախտվել էր այդ կարգը և դրսի հայերը դրվել էին կատարված փաստի առջև:

Երբ մահսարատար Մեթ Պետրոս եպիսկոպոս Խոզարաձյանն ընտրության վերաբերյալ կազմված արձանագրությունը, որի տակ ստորագրել ու կնքել էին ընտրողներն ու հարևան բնակավայրերի ներկայացուցիչները, հասցնում է Կ. Պոլիս, այնտեղ արդեն ամեն ինչ գիտեին և չափազանց վրդովված էին: Զաքարիա Պատրիարքը կարգադրում է չընդունել Ղուկասին որպես կաթողիկոս, նրա անունը չհիշատակել եկեղեցիներում, չհանել

---

6 Նույն տեղում:

7 «Ցիշատակարան, Սիմէոն Կաթողիկոս», «Արարատ», Էջմիածին, 1875, էջ 340:

8 Մատենադարան, ձեռ. 4481, էջ 1ա:

9 Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Ղուկաս Կաթողիկոս, Թիֆլիս, 1899, էջ ԼԳ-ԼԴ:

սուլթանական ֆերմանը: Բացի այդ, նա վերահրապարակել է պալիս հին Տոնացույցը և մերժում Սիմեոն Երևանցու կազմած ու օգտագործման հանձնարարված Տոնացույցը[10]:

Քաջ գիտակցելով իր շուտափույթ ընտրության հետ կապված բոլոր կարգի դժվարությունները՝ Ղուկաս Կարնեցին հրաժարվում էր մտնել այդ պատասխանատու լծի տակ, բայց կաթողիկոսական գահի թափուր մնալը, թեկուզ կարճ ժամանակով, չափազանց վտանգավոր էր, ուստի միաբան- ների թախանձագին խնդրանքներից հետո Ղուկասը տեղի է տալիս: Բայց երբ նրան տեղեկություններ հասան Կ. Պոլսի հայերի վերաբերմունքի մասին, պառակտումն ավելի չխորացնելու համար, նա այլևս Կաթողիկո- սական Աթոռին չնստեց, կարգադրեց աղոթքների ժամանակ հիշատակել ոչ թե իր, այլ հանգուցյալ կաթողիկոսի անունը, հրաժարվեց եպիսկոպոս ձեռնադրելուց, նամակները չէր կնքում կարմիր գույնի կնիքով և նույնիսկ ցանկանում էր Վեհարանից տեղափոխվել միաբանների մոտ[11]: Այնուհետև նա գրավոր հայտնեց Զաքարիա Պատրիարքին, թե ինքը պատրաստ է զիջելու կաթողիկոսական գահը: «Երբ և նկեսցէ, - գրել է նա, - յանձննցից ինքեան զՏունս սուրբ, զոր իրով ամբողջ կուսութեամբ պահեալ եմ շնորհօքն Աստուծոյ մինչև ցայս կէտ և պահեմ»[12]:

Սույն վիճակը շարունակվեց մինչև 1781 թ. կեսերը և այդ ընթացքում Ղուկասի համակրողների ու կողմնակիցների թիվը գնալով ավելացավ: Այս ժամանակ մի անակնկալ միջադեպ կարգավորեց խնդիրը: Կ. Պոլսում կաթոլիկություն ընդունած հայերին հալածելու պատճառով գերմանական դեսպանի միջամտությամբ թուրքական իշխանությունները Զաքարիա Պատրիարքին 1781 թ. մայիսին աքսորեցին Բուրսա: Նրա փոխարեն պատրիարք դարձավ Բրուսայի առաջնորդ Հովհաննես Համադանցին, որը Կ. Պոլսի հայ մեծամեծների հետ միասին դիմեց սուլթանին՝ ստանալու Ղուկաս Կարնեցու հաստատման հրովարտակը[13]: Դա ստացվեց 1781 թ. օգոստոսին[14]: Այսպիսով, Ղուկասի ընտրությունն օրինականացվեց և նա ճանաչվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ամեն ինչ կարծես թե հարթվեց, բայց Ղուկաս Կարնեցին չէր հանգստանում կատարված միջադեպից: Նա անպայման որոշել էր ստեղծել կանոնական մի թուղթ, որի մեջ հանգամանորեն ներկայացնելով արտա- կարգ պայմանների թելադրանքով Կաթողիկոսական ընտրության կարգի

---

10 Նույն տեղում, էջ ԼԵ:

11 Նույն տեղում, էջ ԼԸ:

12 Նույն տեղում, էջ Խ-ԽԱ:

13 Նույն տեղում, էջ ԽԱ:

14 Այդ հրովարտակի պատճենն այժմ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվային բաժնում (տե՛ս Կթղկ. դիվան, թղթ. 1դ, վավ. 491ա-491է, 492ա-492ե):

բացառիկ այդ խախտումը՝ մեկնաբանել Հայոց Եկեղեցու Կաթողիկոսական ընտրության ընդունված և սրբագործված կարգը՝ հնտրագայում թույլ չտալու համար նման կարգի խախտումներ: Առավել ևս, որ այդպիսի կանոնական թղթի ստեղծման ու հաստատման պահանջ էին ներկայացրել նաև կոստանդնուպոլսեցիները:

1787 թ. հունվարի 11-ին Կ. Պոլսի Պատրիարքին, քահանաներին և ողջ ժողովրդին ուղղված կոնդակում Ղուկասը գրում է, թե կանոնական թղթի ստեղծման պահանջը միանգամայն օրինական է, ուստի ինքը թողնելով «զբիտրազան հոգս և զգործառնութիւնս մեր անպակասելիս յայսքան միջոցի ... գրեցաք զկանոնական նամակն Բ (2) համանման՝ հանդերձ պատճառօք և որպիսութեամբն անցիցն մերոց, և բոլոր եպիսկոպոսօք և քահանայակարգ միաբանիւք սրբոյ Աթոռոյս և առաջնորդօք մերձակայ վանորէից մերոց կնքեալ, զմինն թողաք ի սուրբ Աթոռոջս մնալ մշտնջենապէս և զմինն ընդ հոգևոր որդւոյդ մերում Յովհաննէս խոհեմամիտ վարդապետիդ առաքեցաք առ ձեզ՝ ի մնալ յայոր միշտ, զոր տեսանելոց էք»[15]:

1787 թ. հունվարի 11-ի կոնդակի մեջ Ղուկաս Կարնեցին ընդգծում է այն հանգամանքը, որ թուղթ կանոնականը ստեղծվել է վերացնելու բոլոր կարգի զժտություններն ու տարաձայնությունները՝ «երթայով սիրոյ և խաղաղութեան և որպէս յառաջն, ջերմանալ ի սէր սրբոյ Աթոռոյս և մեր ... որպէսզի ... զսուրբ Աթոռս և զօրհնեալ ազգս մեր լաւապէս կառավարեսցուք ի պարծանս ձեր»: Վերջում նա խնդրում է կոնդակը Կ. Պոլիս հասցնող Հովհաննես վարդապետին շուտ պատասխան տալ և վերադարձնել, որպեսզի հնարավոր լինի նվիրակ ուղարկել և «որ այս պաղութիւնքն բարձցին ի միջոյ և սուրբ Աթոռ մայրս ձեր ոչ բազմապատիկ վնասեսցի»[16]:

Կանոնական թղթի հետ միաժամանակ Էջմիածնի միաբանները նամակ են գրում կոստանդնուպոլսեցիներին՝ «զեկուցանելով և յամեցման առիթն (ըստ որում յապաղեցաւ միջոցն), և ևս՝ յորդորումն ի խաղաղութիւն առ եղբայրս և ի հարազատութիւն առ սուրբ Աթոռս, և առ սրբազան Վեհապետն մեր»[17]:

Նույն օրը Ղուկաս Կարնեցին և միաբանները նամակ են գրել Զաքարիա Պատրիարքին, որը, ցավոք, գրանցված չէ սնագրությունների մատյանում: Բայց պահպանվել է նրա համառոտագրությունը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Թուղթ մի ևս առ Պատրիարք Զաքարիա վարդապետն վասն կանոնականի գրոյն, զոր ահա գրեալ և կնքեալ սրբազան Վեհա-

---

[15] Ձեռ. 4501, էջ 1092:

[16] Ձեռ. 4501, էջ 1093:

[17] Ձեռ. 4481, էջ 195ա:

պետին և միաբանիցն յղեցին ընդ Յոհաննէս վարդապետին, և յորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս և իւր, ընդ որս և առանձին ինչ բանք»[18]:

Անցնենք այժմ «Թուղթ կանոնականին»: Վերը նշված երկու օրինակներից մեկը, որը պատրաստել ենք հրատարակության, ճիշտ այնպես է, ինչպես Կ. Պոլիս ուղարկվածը: Գրված է գեղեցիկ նոտրգրով, միմյանց սոսնձված երկու մեծ թերթերի վրա: Դրանց միացման տեղի վրա դրված է կաթողիկոսի փոքր կարմիր կնիքը, որի վրա ընթերցվում է. «Ղուկաս Կաթողիկոս ՌՄԻԹ»: Չափսն է 140x49 սմ: Բաղկացած է 110 տողից: Մի շարք բառեր գրելու համար օգտագործված է կարմիր գույնի թանաք: «Թղթի» վերևում, կենտրոնական մասում, կաթողիկոսական կնիքն է, կարմիր գույնով (տրամագիծն է 5 սմ), որը հրաշալի պահպանվել է: Կնիքի կլոր շրջագծի մեջ պատկերված Միածինը Գրիգոր Լուսավորչին ցույց է տալիս Էջմիածնի վանքը: Նրանք երկուսն էլ շրջապատված են ջրոսական հրեշտակներով: Կնիքի շրջագծի վերի մասում գրված է հետևյալը. «ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԷՐ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՍԱՅՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՌՄԻԹ»: Ներսի շրջագծի մեջ՝ «ՏԵՍԻԼ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ԻՋՄԱՆ ԲԱՆԻՆ ՄԻԱԾՆԻ, Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔԻ, ՇԻՆԵԱԼ ՏԱՃԱՐՍ ՀՐԱՇԱԼԻ»:

«Թղթի» սկզբում Ղուկաս Կարնեցին սիրո, ողջույնի և օրհնության խոսքեր է ուղղում արևմուտքում, արևելքում, հարավում և հյուսիսում, ինչպես հատկապես Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Սպահանում ու Նոր Ջուղայում ապրող հայ հավատացյալ ժողովրդին, Երուսաղեմի, Կ. Կոլսի Պատրիարքներին, բոլոր հոգևորականներին ու աշխարհիկ իշխաններին, առևտրականներին, արհեստավորներին և երկրագործներին: Այնուհետև նշված է, որ մեր նախնիները և Հայրապետները բարվոք կարգ և օգտակար սահմանադրություն են կանոնել ու ավանդել մեզ: Նրանց հետևորդներն ու աշակերտները պետք է ղեկավարվեն նրանցով, «այլապէս անպատսպար լեալ՝ ընդունեն զհարուածս և բազմավնաս դիպուածս յամենայն կողմանց»: Հետո գրում է, որ ըստ «նախնավանդ և հնագոյն սահմանադրութեան» կաթողիկոսը կարգվում է բոլոր միաբանների և «ընդհանուր ազգի մերոյ» ընտրությամբ ու համակամությամբ: Նա վկայակոչում է Աղեքսանդր Ջուղայեցի Կաթողիկոսին, որը հնագույն կանոնները «կանոնադրեալ և կրկնապէս աւանդեալ է ի նամակի իւրում», որպեսզի իրենից հետո և ապագայում առանց վկայական թղթի «չորեքծագեան կողմանէ, որք թէմ և վիճակ են և ժողովուրդ սրբոյ

---

18 Միաժամանակ Ղուկաս Կարնեցին նամակ է գրել Թոխաթում գտնվող մատթեոս Աղամջանին և հանձնարարել օժանդակություն ցույց տալ Կ. Պոլիս մեկնող Հովհաննես վարդապետին, իսկ Կարինի գործակալ Հայրապետին կարգադրել է Հովհաննեսին տալ ճանապարհածախս՝ 150 դուռուշ (Ձեռ. 4481, էջ 196ա-196բ):

Աթոռոյս» առանց «Իսպահանի և Իստամպոլի» և առանց սուրբ Աթոռի մեծ ժողովի ոչ ոք չի կարող ձեռնադրվել կաթողիկոս:

Աղեքսանդր Բյուզանդացի Կաթողիկոսը իր կանոնադրության մեջ գրել է, թե «Հայրապետ մերոյս ազգի ... համահաւանութեամբ բոլոր ազգիս մերոյ եղիցի ընտրեցեալ»: Որ նա «զինիցի ի հաւատս ուղղափառ, միաբնադաւան... ի գործս բարի, ի հասակս կատարեալ, ի վարս պարկեշտ, ի բարս քաղցր և խոնարհ և այլն»:

Ղուկաս Կարնեցին վկայակոչում է նաև Հակոբ Շամախեցի Կաթողիկոսի կանոնները, ըստ որոնց վախճանված Հայրապետի փոխարեն նորն ընտրվելու է «աթոռայեոցս և ամենայն ազգի մերոյ կամակցութեամբ»: Ապա բերում է ընտրության ժամանակ պարտադիր հետևյալ չորս կանոնները.

Նախ, ընտրված կաթողիկոսը մինչև օծվելը իր անունը չպետք է հիշատակի «հայրապետական անուամբ» եկեղեցական աղոթքների ժամանակ:

Երկրորդ, նախքան օծվելը իր նամակների սկզբում անվան մոտ նա պետք է գրի արքեպիսկոպոս և կաթուղիկոսացու»:

Երրորդ, մինչև օծվելը կաթողիկոսը իր նամակները կնքելու համար օգտագործելու է սև գույնի թանաք:

Չորրորդ, կաթողիկոսացուն, եթե կարելի լինի գնալ Էջմիածին, ապա այլ վայրում չպետք է օծվի «ի հայրապետութիւն»:

Ղուկասը նշում է, որ նախապես իմանալով այս բոլոր կանոնների մասին՝ ինքը, այնուամենայնիվ, հարկադրված է եղել շուտափույթ, առանց դրսի հայերի գիտության և համաձայնության, կաթողիկոս օծվել: Հետո նա մանրամասն նկարագրում է ստեղծված քաղաքական կացությունը: «Ահա յայնցանէ պատճառացն հարկաւորեցեալ, այսպէս եղև կոչումն մեր և օծումն, և ոչ այլ կերպիւք»: Այդ պատճառների մասին խոսք եղավ այս հրապարակման սկզբում:

Ղուկաս Կարնեցին անհրաժեշտ է համարում «կրկակօրէն դրոշմեմք ի թղթիս և կանոնադրեմք» հետևյալ կանոնները, որոնք «ըստ վաղնջական սովորութեանց եղելոց ի սուրբ Աթոռոջս» և որոնք այնուհետև «անվրէպ կատարեսցին»:

Նախ, կաթողիկոսի մահվան ժամանակ գլխավոր արքեպիսկոպոսները Վեհարանից դուրս են հանում սպասավորներին, ապա փակում ու կնքում դռները, բայց բանալիները թողնում են նախկին սպասավորների մոտ: Եթե որևէ առարկա հարկավոր լինի, ապա նույն կնքողները սպասավորների հետ, որոնց մոտ էին գտնվում բանալիները, բաց են անում դռները, վերցնում հարկավոր առարկաները, փակում և կնքում դռները մինչև նոր կաթողիկոսի ընտրվելը: Երբ ընտրությունը կայանա, և կաթողիկոսը գա նստելու իր գահին, ապա նրան պետք է հանձնեն իր տունն ու բանալիները:

Երկրորդ, ըստ Աղեքսանդր Ջուղայեցի Կաթողիկոսի կանոնի և «ըստ յիշեցմանց» Աղեքսանդր Բյուզանդացու և Հակոբ Շամախեցու, կաթողիկոսի

մահից հետո ս. Աթոռում գումարվելու է ժողով բոլոր միաբանների, առաջնորդների, քահանաների, երկրի իշխանների և նշանավոր մարդկանց մասնակցությամբ, որի ժամանակ ընտրվելու է «գհայրապետութեան արժանի արքեպիսկոպոսն», որը կարող է լինել թե՛ Էջմիածնից և թե՛ այլ վայրերից: Հետո համախոսական նամակ (մահնամ) պետք է գրել մեր ազգին «ն մանաւանդ ի գերահռչակ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս և ի յԱսպահան» և համակամությամբ խնդրեն «կարգել զնա կաթուղիկոս»:

Իսկ թե ոմանք առանց գիտության և համահաճությամբ բոլոր ազգին հանդգնեն մի որևէ եպիսկոպոսի ընտրել կաթողիկոս, և ինքն էլ համաձայնվի դրան, ապա դա անընդունելի կլինի, կհամարվի խռովություն, և ընտրողները նզովյալ կլինեն:

Երրորդ, նորընտիր կաթողիկոսը Էջմիածնի վանց գլխավոր և տարիքով ծեր եպիսկոպոսների ընտրում է իրեն խորհրդակից և «նոցին գիտութեամբն զգլխաւոր առնլիս առնուցու, և զտալիսն տացէ»: Այս կանոնը նորություն չէ և օտար չէ «ի նախնեացն սովորութեանց», քանի որ միշտ էլ ս. Տան «իրակոթիւնք» գործակալներն են արել, ամենայն մուտք և ելք նրանց ձեռքով է կատարվել ու գրանցվել դավթարների մեջ: Ուրեմն կաթողիկոսի մոտ գտնվող արքեպիսկոպոսը, տեղապահը, աթոռակալ կոչվող գործապետը, ս. Տաճարի մեծ լուսարարը, ժամօրհնողը և դարպասչին խորհրդականներ են լինելու կաթողիկոսին և «մտերմաբար ակնածուք ամենայն գործառնութեանց, ելից և մտից սրբոյ Գահիս»:

Չորրորդ կանոնը վերաբերում է Էջմիածնի նվիրակներին: Վերջիններս, ըստ Հակոբ Ջուղայեցու գրած խրատների և իր՝ Ղուկասի «պատուիրատուութեանց», ուր էլ գնան, համեստ և պարկեշտ պետք է լինեն, «առաքինավար և ուղղաբարոյ»: Չպետք է խառնվեն վիճակների առաջնորդների գործերին, սիրով ու քաղցրությամբ պետք է վարվեն Երուսաղեմի նվիրակների հետ: Նրանք միմյանց նկատմամբ եղբայրասիրության բարի օրինակ պետք է լինեն ժողովրդի համար, կռվից ու աղմուկից մշտապես պետք է խույս տան: Նվիրակները ս. Աթոռի արդյունքները չպետք է վատնեն և իրենց գործն ավարտելուց հետո անհապաղ վերադառնալու են Էջմիածին և այնտեղ են տալու իրենց հաշվետվությունը: Ժողովրդի հետ նրանք խաղաղությամբ պետք է վարվեն, մեղմությամբ, նրանց հորդորեն ս. Աթոռին տալու իրենց տուրքերը:

Ուշագրավ են այս կապակցությամբ Ղուկաս Կարնեցու արտահայտած մտքերը. «չափաւորապէս խնդրեսցեն զնոյն, իբր զկաթն ի կթելոց, և ոչ ճմլելով զպտկունս, զի արիւն ելցէ ըստ իմաստնոյն»: Նվիրակներին նաև պատվիրում է ուղղասիրաբար, խոհեմությամբ և բարի քաղաքավարությամբ վարվել բոլորի հետ, որպես վայել է Քրիստոսի պաշտոնյային և ս. Աթոռից ուղարկված առաքյալին՝ մխիթարելով ժողովրդի սիրտը շահեն և ս. Աթոռը փառավորեցնեն իրենց բարի գործերով: Իսկ եթե նվիրակներից

ոմանք հակառակն անեն և այդ մասին վիճակներից բողոքներ հասնեն կաթողիկոսին, ապա նրանք եփ կվերադարձվեն Էջմիածին, կդատվեն և արժանի պատիժ կստանան:

Այնուհետև խոսվում է այն անձանց մասին՝ «ի դատելեացն ոք», որոնք անհնազանդություն կցուցաբերեն Հայրապետին Օսմանյան պետության մեջ: Այդ դեպքում կաթողիկոսը պետք է գրավոր դիմի Կ. Պոլսի Պատրիարքին՝ մեղավորին արքունական հրամանով Էջմիածին ուղարկելու համար:

Վերջում հորդորվում է ամենայն ժամ պահել Աստծո օրենքները, պատվիրանները և մեր սուրբ Հայրապետների կանոններն ու բարի ավանդությունները: Նա նշում է, որ բազմաթիվ անձանց խնդրանքով գրել է այս կանոնները «ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, ի խաղաղութիւն և ի շահ օրհնեալ ազգիդ»: Կանոնները գրվել են երկու օրինակից «միապէս», կնքվել ս. Գահի բոլոր եպիսկոպոսների ու քահանայակարգ միաբանների կողմից: Եվ արդ, ովքեր չեն հետևի «գլխադասդարիթ, աստուածահաճոյ և օգտաւոր կանոնսս գայսոսիկ ... արժանիք լիցին մերոցս դատաստանաց և պատժոց հոգևորապէս և մարմնաւորապէս»: Իսկ ովքեր հնազանդությամբ կատարեն այս գրվածները, կլինեն «անպարտք պատժոց և ազատք ի խղճէ, օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ»: